

Լ. Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

Ներակայման (իմպլիկացիայի) լեզվական հարաբերակիցների վերլուծությունը կարևոր նշանակություն ունի թարգմանության տեսության լույսի ներքո, եթե այդ հիմնահարցը դիտարկենք անփոփոխակայնի, բոլոր լեզուների համար հատկանշականի և տարբեր լեզուներում դրա փոփոխակային արտահայտությունների տեսանկյունից: Այս առումով հետաքրքիր է ոչ միայն տեքստի միևնույն հատվածի համադրումը բնագրով և տարբեր լեզուներով կատարված թարգմանություններով, այլև միևնույն լեզվով կատարված տարբեր թարգմանությունների համադրումը: Հմտ. «... թարգմանությունների համադրումը հաճախ օգտակար է լինում ենթադրման բոլոր հնարավոր միջոցների վերլուծության ժամանակ և որ, մյուս կողմից, ներակայման ընդհանուր տեսության ստեղծումը կենսականորեն անհրաժեշտ է թարգմանության տեսության զարգացման համար: Ներակայման տեսության իմացությունը հրեանարավորություն կտար, թերևս, խուսափելու այնպիսի սխալներից, ինչպես թարգմանության ժամանակ իմաստի հարթեցումը»¹:

Հողվածի նպատակն է պայմանական ասույթների՝ որպես ներակայող ասույթների մի տարատեսակի, համադրական վերլուծությունը ինչպես բնագրում և ներլեզվական թարգմանություններում, այնպես էլ միջլեզվական թարգմանություններում:

Ուսումնասիրության նյութը Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունն է (1-ին և 2-րդ արարները, ինչպես նաև «Լինել, թե չլինել...» մենախոսությունը 3-րդ արարից)² և դրա թարգմանությունները հայերենում և ռուսերենում: Ընդ որում, վերլուծության ենթարկվել են եղած բոլոր պայմանական ասույթները, ինչը կարևոր է նաև վիճակագրական եզրակացությունների տեսանկյունից:

Ընտրության ժամանակ հաշվի են առնվել՝ 1) դիտարկվող լեզուներում տարբեր թարգմանությունների առկայությունը, 2) վերլուծվող ստեղծագործության հեղինակի լեզվի ռճական-շարահյուսական առանձնահատկությունները:

Հանձարեղ Շեքսպիրի ստեղծագործության գլուխգործոցն, անկասկած, «Համլետն» է: Այս իմաստով ուշագրավ են Մ. Յու. Լերմոնտովի հանրահայտ խոսքերն այն մասին, որ եթե Շեքսպիրը մեծ է, ապա՝ Համլետով, եթե նա անկրկնելի է, ապա՝ շնորհիվ Համլետի: Մեծ մարդասեր Շեքսպիրի ողջ մտածային գործունեությունը մարմնավորվել է նրա հերոսի կերպարում՝ նրա ինքնահայեցողությամբ, վերլուծական ուղեղի տեր հերոսի, որի համար խորհրդ-

¹ И. В. Арнольд. Импликация как прием построения текста и предмет филологического изучения.—«Вопросы языкознания», 1982, № 4, с. 87—88.

² W. Shakespeare. Hamlet Prince of Denmark, The Complete Pelican Shakespeare. The Tragedies. Great Britain: Penguin Books, 1981. p. 118—162.

դածելու անհրաժեշտությունը բնական է: Իսկ դա պետք է պարփակվի համապատասխան ձևի մեջ: Այստեղից էլ՝ երկխոսությունների, «ինքնահայեցող» մենախոսությունների, և. Ն. Մակարևի եզրաբանությամբ³, առատությունը, որոնց արտահայտման լեզվական միջոցները հիմնականում և ամենից առաջ ներակայող ասույթներն են և, մասնավորապես, պայմանական կառուցվածքները:

Անցնենք «Համլետից» վերցված համարժեք հատվածների (ընագրում և հայերեն ու ռուսերեն թարգմանություններում) պայմանի արտահայտման միջոցների համադրական վերլուծությանը: Հայերեն թարգմանություններից ընտրված է Հ. Մասեհյանի թարգմանությունը⁴, որն առավել հանրահայտն ու առավել տաղանդավորն է, իսկ ռուսերեն թարգմանություններից այստեղ կդիտարկենք Մ. Լոզինսկու թարգմանությունը⁵, որը ամենաճշգրիտ բանաստեղծական թարգմանությունն է:

Վերլուծվել է 67 պայմանական ցուցիչ, որոնք կազմում են հետևյալ միջլեզվական հարաբերակցությունները, որոնց հիմքում ընկած է անգլերեն հարաբերակիցը:

1) if—եթե—если

Արձանագրվել է 16 դեպք, ներառյալ նաև այնպիսի մի դեպք, ուր if և եթե շաղկապներով ասույթներին համապատասխանում է պայմանական իմաստ չպարունակող ասույթ: Այստեղ դիտվում է պայմանի արտահայտման միջոցների լիակատար նույնականություն:

if—եթե—когда (4 դեպք)

Այստեղ դիտվում է հարաբերակիցների ոճական հոմանիշություն:

if—եթե—когда (5 դեպք)

Այստեղ գործ ունենք ոճական-հոմանիշային հարաբերակցության հետ՝ ռուսերենի շաղկապի ոճական երանգավորվածության շնորհիվ:

if—եթե—если (4 դեպք)— ոճական-հոմանիշային հարաբերակցություն:

Նկատվել է նաև if—եթե—когда հոմանիշային հարաբերակցության մեկ դեպք: Մեկ դեպքում առկա է if—եթե չէ—чуть հարաբերակցությունը:

Օրինակ.

«I'll observe his looks,

I'll tent him to the quick; if he but blench

I know my course».

«Իսկ ես կնայեմ նրա աչքերին, վերքը կխառնեմ,

Եվ ցնցվի թե չէ, գիտեմ՝ ինչ կանեմ»:

«... вольюсь в его глаза;

Проникну до живого; чуть он дрогнет.,

Своей путь я знаю».

Ինչպես տեսնում ենք, անգլերեն ասույթի պայմանական իմաստը երկու թարգմանություններում էլ ոչ-նույնականորեն է արտացոլված. դրանցում արտահայտված է ժամանակայնության իմաստ: Վերլուծելով այս օրինակը, է. Վարդանյանը⁶ նկատում է, որ if շաղկապով նշվում է այն բազմաթիվ հար-

³ Տե՛ս, Լ. Փ. Макарьев. Монолог. Педагогический этюд.—«Записки Ленинградского театрального института». 1941, էջ 40—51:

⁴ Վ. Շեխպիր, Համլետ (Թարգմ. Հ. Մասեհյանի), «Ընտիր Երկեր». Երևան, 1951, հ. 1, էջեր 3—113:

⁵ Այս և վերլուծվող մյուս ռուսերեն թարգմանությունները վերցված են Մ. Шекспир. Гамлет. Избранные переводы. М., 1985:

⁶ Տե՛ս է. Վարդանյան, Համարժեքության մասեհյանական ըմբռնումը, «Շեքսպիրական»,

ցերից մեկը, որոնց լուծումն է որոնում շեքսպիրյան հերոսը: Չի կարելի չկիսել հեղինակի կարծիքն այն մասին, որ Հ. Մասեհյանի (ավելացնենք նաև Մ. Լոզինսկու) մեկնաբանությունը Համլետն ավելի վճռական հերոս է. նա համոզված է, որ Կլավդիոսը մեղավոր է, ու մտովի սպանում է նրան, թագավորին սպանելու իր որոշումը նա իրագործում է իր մտքի ու բանականության ուժով: Սակայն նրա՝ այս ճիշտ եզրահանգումը հիմնվում է այն սխալ ելակետի վրա, թե հերոսի կերպարի փոփոխությունը կապված է if շաղկապը և միացական շաղկապով փոխարինելու հետ: Բնագրի տեքստում արտահայտված այլընտրական նշանակության շեքսպիրյան տեղի է ունենում թե շե ժամանակային շաղկապի գործածման շնորհիվ՝ առանց նշված ներկա իմաստի, մինչդեռ և շաղկապը սոսկ կապակցում է այդ ասույթը նախորդին:

Արձանագրվել է if—բե—անշաղկապություն հոմանիշային հարաբերակցության մեկ դեպք:

Վերջապես, հայտնաբերվել է երկու դեպք, երբ if շաղկապի հարաբերակիցներն են իմաստով նույնական ес.ли շաղկապը և իմաստային առումով փոքր-ինչ տարբերվող երբ շաղկապը:

2) Հայտնաբերվել են երկու հարաբերակցային կաղապարներ՝ բնագրում unless շաղկապով: Դրանցից մեկում հարաբերակիցները նույնական են: Դա unless—եթե չ...—если не կաղապարն է: Իսկ մյուս հարաբերակցության մեջ՝ unless—համապատասխան տեղի բացրողում—когда, նույնականություն չկա:

3) Արձանագրվել է though բառով երկու նույնական հարաբերակցություն. though—թեկուզ—хотя б (3 դեպք) և though—թեպետ—хотя б (1 օրինակ):

4) Հանդիպել են երկու հարաբերակցություն as շաղկապով. as—երբ—если և as—պայման չկա—раз, որոնցում հարաբերակիցները, արտահայտելով նույն նշանակությունը, տարբերվում են սոսկ նշանակության նրբագույն երանգներով:

5) And շաղկապով ասույթում պայմանական իմաստը երկու թարգմանություններում արտակայված է եթե և если շաղկապներով:

6) Or շաղկապը համարժեք հարաբերակիցներով հաղորդվում է հետևյալ դեպքերում.

or—այլապես—не то (1)

or—թե ոչ—иначе (1)

or—թե ոչ—или (1):

7) Lest շաղկապը հաղորդված է եթե ոչ նույնական շաղկապով և a не то հոմանիշային շաղկապով:

8) Դիտվել է when—եթե—когда б հոմանիշային հարաբերակցության մեկ դեպք:

9) Արձանագրվել է երկու դեպք, երբ բնագրի լեզվով ասույթում գործածված է ոչ թե պայմանական, այլ պատճառական շաղկապ, մասնավորապես՝ for շաղկապը: Այդ դեպքերը ներկայացնում են հետևյալ հարաբերակցական կաղապարները.

1) for— քանի որ—если և

2) for—որոնք—если:

Ինչպես նկատում ենք, երկու դեպքում էլ պատճառական շաղկապի ուսերեն հարաբերակիցը իմաստով տարբերվող ес.ли պայմանական շաղկապն է, մինչդեռ հայերեն թարգմանություններում առաջին դեպքում for շաղկապին համապատասխանում է իմաստով նույնական քանի որ շաղկապը, իսկ երկ-

որորդ դեպքում պատճառական ասույթը հաղորդվում է պայմանականի փոխակերպվող որոշչային նախադասությամբ:

10) Մեկ օրինակում էլ բնագրում գործածված է պատճառական շաղկապ, մասնավորապես, that շաղկապը: Միջլեզվական թարգմանություններում դրան համապատասխանում են ուր պայմանական-պատճառական շաղկապը և վերջինիս նույնական բառ շաղկապը:

Վերը դիտարկված բոլոր դեպքերում, որոնք կազմում են վերլուծության ենթարկված դեպքերի մեծամասնությունը, պայմանական իմաստի ցուցիչները անգլերենում շաղկապներն էին, որոնց միջլեզվական թարգմանություններում համապատասխանում էին (եզակի բացառություններով) նույնպես շաղկապները:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ պայմանական իմաստն արտահայտվում է այլ լեզվական միջոցներով: Դիտարկենք դրանք:

11) Օրինակներից մեկում without կապին համապատասխանում են հայերենում նույնական առանց կապը, իսկ ռուսերենում՝ когда бы շաղկապը:

12) Արձանագրվել է but that կապով հարաբերակցության մեկ դեպք. but that—եթե—когда б:

13) Վերջապես, դիտվել է 1 օրինակ, որում պատճառի, հիմնավորման նշանակությամբ for կապին թարգմանություններում համապատասխանում են եթե և если շաղկապները:

14) Հայտնաբերվել է 4 դեպք, երբ բնագրում պայմանական իմաստը հաղորդվում է դերբայական դարձվածով: Հայերեն թարգմանության մեջ հարաբերակիցները իմաստաբանորեն համարժեք, ինչպես նաև իմաստով տարբերվող շաղկապներն են, ռուսերենում՝ շաղկապները և նույն (պայմանական) նշանակությունն արտահայտող դերբայական (депричастный) դարձվածը.

դերբայական դարձված—եթե—если

դերբայական դարձված— քանի որ—когда

դերբայական դարձված—երբ—դերբայական (депричастный) դարձված

դերբայական դարձված—պայման չկա—раз

15) Դիտվել են անգլերենում անշաղկապ նախադասությամբ պայմանի արտահայտման 4 դեպք: Դրանց համապատասխանում են եթե (2 դեպք) և թե (1 դեպք) շաղկապներով բարդ ստորադասական նախադասություններ՝ հայերենում, իսկ համապատասխան ռուսերեն թարգմանություններում՝ անշաղկապ նախադասություններ: Այստեղ, ինչպես կարելի է նկատել, դիտվում է պայմանի արտահայտման միջոցների հոմանիշություն:

Արձանագրվել է նաև հետևյալ հարաբերակցական կաղապարում արտացոլված դեպքը.

անշաղկապություն—միայն թե—если бы

16) Եվ, վերջապես, օրինակների վերջին խումբը կազմում են այն դեպքերը (4), երբ անգլերեն տեքստում պայմանական իմաստ չկա: Հարաբերակցություններն այստեղ հետևյալներն են.

պայման չկա—պայման չկա—если

պայման չկա—պայման չկա—коль

պայման չկա—եթե—ежели

պայման չկա—բացի—коли

Այսպիսով, համադրական վերլուծությունը ցույց տվեց, որ պայմանական իմաստը բնագրում և միջլեզվական թարգմանություններում արտահայտված է հոմանիշային, հիմնականում ոճաբանորեն տարբերվող, իսկ երբեմն նաև նույնական միջոցներով: Դրանք մեծամասամբ շաղկապներն են:

Այժմ անցնենք «Համայնի» ռուսերեն թարգմանությունների համադրական

դիտարկմանը: Վերլուծել ենք Մ. Լոզինսկու, Ն. Պոլևոյի, Ա. Կրոնբերգի և Բ. Պաստերնակի թարգմանությունները: Վերլուծությունը ցույց տվեց, որ մի շարք դեպքերում թարգմանությունները նույնական են: Մասնավորապես, դեպքերից իննում բոլոր շորս թարգմանություններում գործածված է если շեզոք շաղկապը, ընդ որում ուշագրավ է, որ գրեթե միշտ վերջինիս հարաբերակիցները անգլերենում և հայերենում համապատասխանաբար if և թե շաղկապներն են: Երեք թարգմանություններում երկու անգամ если շաղկապը գործածվել է համապատասխան ասույթում պայմանական իմաստի բացակայության պայմաններում (Ն. Պոլևոյի թարգմանության մեջ), մեկ դեպքում այդ շաղկապն առկա է երեք թարգմանություններում, իսկ Ա. Կրոնբերգի թարգմանության մեջ պայմանական նշանակություն չի արտահայտված: Արձանագրվել է երեք դեպք, երբ թարգմանություններից երկուսում если շաղկապն առկա է, իսկ մյուս երկուսում պայման չկա: Երկու թարգմանություններում նույնական՝ պայմանական-ժամանակային նշանակությունն արտահայտված է когда շաղկապով, մինչդեռ մյուս երկու թարգմանություններում պայմանական իմաստը բացակայում է (1 դեպք): Եվ, վերջապես, արձանագրվել է մեկական դեպք, երբ 1) բոլոր թարգմանություններում գործածված է պայմանական-զիջական **хоть** շաղկապը՝ թեկուզ և **though** հարաբերակիցներով, 2) երեք թարգմանություններում **хоть** շաղկապն առկա է, մինչդեռ Բ. Պաստերնակի թարգմանությունում պայմանական իմաստը բացակայում է: Բերենք հետևյալ օրինակը.

«Если принимать каждого по заслугам, то кто избежит кнута?» (թարգմ. Մ. Լոզինսկու): «Если всякого угощать по достоинству, много ли останется на свете таких, кому не стоило бы дать порядочной оплеухи?» (թարգմ. Ն. Պոլևոյի): «Если обращаться с каждым по заслугам, кто же избавится от пощечины?» (թարգմ. Ա. Կրոնբերգի): «Если обходиться с каждым по заслугам, кто уйдет от порки?» (թարգմ. Բ. Պաստերնակի):

Ինչպես ցույց տվեց վերլուծությունը, դեպքերի մեծամասնությունում թարգմանությունները հոմանիշային են: Ընդ որում, սահմանազատվում են, մի կողմից, այն թարգմանությունները, որոնցում գործածված են հոմանիշային պայմանական շաղկապները, մյուս կողմից՝ պայմանի արտահայտման հոմանիշային միջոցները: Թարգմանությունների առաջին խմբում տարբերակում ենք հետևյալ դեպքերը. ա) ոճական հոմանիշություն, բ) իմաստային հոմանիշություն, գ) ոճական-իմաստային հոմանիշություն:

Վիճակագրական վերլուծությամբ պարզվել է, որ դեպքերից հինգում դիտվել է շորս շաղկապների ոճական հոմանիշություն, երկու դեպքում՝ երեք շաղկապների ոճական հոմանիշություն՝ թարգմանություններից մեկում պայմանական իմաստի բացակայության պայմաններում և մեկ դեպքում՝ երկու շաղկապների ոճական հոմանիշություն՝ մյուս երկու թարգմանություններում պայմանական իմաստի բացթողման պայմաններում:

Որպես օրինակ մեջբերենք հետևյալ թարգմանությունները.

«Ударить протазаном?... Да, если двинется»,

«Коли сгс, когда он отвечать не хочет!»,

«Не нанести ль удар ему?... Ударь, когда

остановится он не хочет»,

«Ударить алебардой?... Бей, если увернется»:

Չորս շաղկապների իմաստային հոմանիշությունը դիտվում է երեք դեպքերում, երկու դեպքում՝ երեք շաղկապների իմաստային հոմանիշություն՝ թարգմանություններից մեկում պայմանի բացակայությամբ, մեկ դեպքում՝ եր-

կու շաղկապների իմաստային հոմանիշություն՝ մյուս երկու թարգմանություններում պայմանական իմաստի բացթողմամբ: Բերենք օրինակներ.

«Я очень рад вас видеть.

Горацио? Или я сам не я»:

Պայման չկա:

«А, очень рад, что вижу вас здоровым, Горацио! Илья ошибаюсь я?»:

«Рад вас здоровым видеть,

Гораций, — если в памяти я сам?»:

Վերջապես արձանագրվել է շորս շաղկապների և երեք շաղկապների ոճական-իմաստային հոմանիշության երեքական դեպք: Օրինակ.

Мгновенный вопль, исторгшийся у ней,

Коль смертнсе их трогает хоть мало,

Огни очей небесных увлажил бы

И возмутил богов».

Պայման չկա:

«Взрыв вопля их, когда они не чужды

Чувств смертного, заставил бы рыдать

Небес огнистые глаза и пробудил бы

В сердцах богов бессмертных состраданье!»:

«И если смертный мог бы их пронять,—

Тогда бы вопль несчастной, переполнив

Слезам жаркие глаза небес,

Смягчил бессмертных»:

Միևնույն ասույթի ներլեզվական թարգմանությունների երկրորդ խմբում դիտվում է պայմանի արտահայտման միջոցների բազմազանություն: Դրանք հետևյալ հարաբերակցություններն են.

1) 3 շաղկապ և 1 դերբայական (депричастный) դարձված (1 դեպք),

2) 3 շաղկապ և 1 բառակապակցություն (1 դեպք),

3) 3 շաղկապ և «быть может» (3 դեպք),

4) 3 շաղկապ և պարզ նախադասություն ստորադասական եղանակով (1 դեպք),

5) 3 շաղկապ և 1 անշաղկապ նախադասություն (1 դեպք),

6) 2 շաղկապ և 2 անշաղկապ նախադասություն (2 դեպք),

7) 1 շաղկապ, 2 անշաղկապ նախադասություն և «с» կապը սեռական հոլովով գոյականի հետ (1 դեպք),

8) 2 դերբայ և 2 անշաղկապ նախադասություն (1 դեպք):

Բացի այդ, արձանագրվել է մեկական դեպք, երբ թարգմանությունները մեկում պայմանական իմաստի բացթողման դեպքում մյուս երեքում դիտվել են հետևյալ հարաբերակցությունները.

9) если—когда—которые

10) если—если—тогда

11) если—в случае—в случае

12) коли—если—сверх

13) коли—когда—при

14) անշաղկապ նախադասություն—когда 6—պարզ ասիոմատիկ նախադասություն:

Նվ, վերջապես, վերջին երկու դեպքերը. 1) երկու թարգմանություններում պայմանական իմաստի բացակայության դեպքում, մյուս երկուսում գործածված են բարդ ստորադասական պայմանական նախադասություն և պարզ նա-

խաղասություն՝ ստորադասական եղանակի բայով, 2) թարգմանություններից մեկում գործածված է պայմանական-պատճառական բառ շաղկապը, մինչդեռ մյուս թարգմանություններում պայմանական իմաստ չկա (երկու դեպք):

Բերենք հետևյալ օրինակը.

«В ссору

Вступать остерегайся, но, **вступив,**

Так действуй, чтоб остерегался недруг»,

«Не ссорься, а **поссорившись,** будь тверд...»,

«Остерегись, чтоб не попасться в ссору:

Попал — так чтобы враг остерегался...»,

«Старайся

Беречься драк, **а сцепишься, берись**

За дело так, чтоб береглись другие»:

Որպես առանձին խումբ պետք է դիտել այն ներլեզվական թարգմանությունները, որոնցում, ի տարբերություն վերը դիտարկված դեպքերի, պայմանական ցուցանիշները հարաբերակցում են ոչ-պայմանականների հետ:

Դիտվել է նման 7 դեպք հետևյալ հարաբերակցություններով.

1) если—если—если—когда (ժամանակային),

2) если—когда (ժամ.)—когда (ժամ.)—когда (ժամ.),

3) если—если—когда (ժամ.)—անշաղկապություն,

4) если—պայման չկա—դերբայական դարձված —когда (ժամ.)

5) а не то—чтобы не—иначе—чтобы не,

6) иначе—ведь—когда—а,

7) хотя бы—պայման չկա—хоть—какой бы ни:

Ինչպես կարիլի է նկատել, միևնույն ասույթի տարբեր թարգմանություններում նույն լեզվի սահմաններում պայմանական ցուցիչները հարաբերակցում են ժամանակային (1—4 դեպքերը), նպատակային (5-րդ դեպքը), պատճառական, ժամանակային, հակադրական (6-րդ դեպքը), ինչպես նաև զիջական (7-րդ դեպքը) ցուցիչների հետ: Դա մեկ անգամ ևս հաստատում է պայմանի իմաստի և ժամանակայնության, պայմանի, պատճառականության և այլնի մերձությունը, դրանց փոխակերպունակությունը, որը հիմնված է այն բանի վրա, որ այդ նշանակությունները փոփոխակային են «ներակայում» տրամաբանական շաղկապի անփոփոխակային նշանակության սահմաններում: Հարկ է հատուկ կանգ առնել 6-րդ դեպքի վրա, ուր ներակայող խումբը ներկայացնող ցուցիչների կողքին գործածված է ա հակադրական շաղկապը: Բերենք այդ օրինակը.

«Прошу тебя, продолжай; ему надо плясовую песенку или непристойный рассказ, **иначе** он спит, продолжай, перейди к Гекубе» (Թարգմ. Մ. Լոգինսկու): «Цирюльщик твой то же говорил мне о твоей бороде. Продолжай—**ведь** он скоро заснет... Да—перейдем к Гекубе» (Թարգմ. Ն. Պոլևոյի): «Пожалуйста, продолжай. Он спит, **когда** не слышит пошлостей или непристойностей. Продолжай о Гекубе» (Թարգմ. Ա. Կրոնբերգի): «Продолжай, прошу тебя. Для него существуют только балеты и сальные анекдоты, **а** от прочего он засыпает. Продолжай. Перейди к Гекубе» (Թարգմ. Բ. Պաստերնակի):

Բ. Պաստերնակի թարգմանության մեջ անհետացել է մյուս երեք թարգմանություններում (ի դեպ՝ նաև բնագրում ու հայերեն թարգմանությունում) արտահայտված ներակայման նշանակությունը, և ընդգծված է հակադրական

նշանակությունը, որը մյուս թարգմանություններում քողարկված ձևով է առկա: Ներկայող շաղկապների շրջանակներից դուրս գտնվող այս շաղկապի ընտրությունը կարելի է բացատրել գեղարվեստական ստեղծագործության թարգմանչի ունեցած ազատության որոշակի չափով: Մյուս գործոնների կողքին, նաև այդ ազատությամբ են բացատրվում ինչպես միջլեզվական, այնպես էլ ներլեզվական թարգմանությունների մեջ առկա տարբերությունները:

Ինչ վերաբերում է ռուսերեն թարգմանություններին, նշենք հետևյալը: Համադրական վերլուծությունը ցույց է տվել, որ պայմանական իմաստի բացթողումները (բնագրում և մյուս թարգմանություններում առկայության պայմաններում) մեծամասամբ Ն. Պոլևոյի թարգմանության մեջ են (25 դեպք 66-ից)՝ «Շեքսպիրի պիեսի ազատ բեմական տարբերակում»⁷: 19-րդ դարի հանրահայտ ռուս գրողն ու հրապարակախոսը, ինչպես նշում է Ա. Ն. Գորբունովը, «չի ձգտել ճշգրտության և կրթման շատ է հեռացել բնագրից: Նա գրեթե մեկ երրորդով կրճատել է պիեսը, խունացրել է շեքսպիրյան սրամտությունը, վերացրել է շարաճճի բառախաղերը, կրճատել է անհասկանալի, անպարկեշտ կամ չափազանց երկար թվացող ամեն բան՝ դրանով իսկ ողբերգությանը տալով ռոմանտիկական մեկողրամայի նրբերանգ»⁸: Այստեղ տրված է նշված տարբերությունների պատճառների բացատրությունը: Երկրորդ՝ աչքի է զարնում Մ. Լոգինսկու և Ա. Կրոնբերգի թարգմանությունների մերձությունը, որն ապացուցվում է նաև վիճակագրական տվյալներով (նույնականության 15 դեպք)՝ մի կողմից, և Մ. Լոգինսկու և Բ. Պաստերնակի թարգմանությունների առավել տարբերությունը՝ մյուս կողմից (ընդամենը 6 դեպք):

Մ. Լոգինսկու թարգմանությունը բնութագրվում է որպես «ամենաճշգրիտ բանաստեղծական թարգմանություն»⁹: Ա. Կրոնբերգը նույնպես ոչինչ չի փոխել և հոգաժույթամբ է վերաբերվել բնագրին¹⁰:

Ինչ վերաբերում է Մ. Լոգինսկու և Բ. Պաստերնակի թարգմանություններին, ապա, ինչպես նշում է Ա. Ն. Գորբունովը¹¹, Բ. Պաստերնակի համար կարևոր է հաղորդել ստեղծագործության ոգին, այդ պատճառով էլ նա խիստ հեռացել է բնագրից, նրա համար խորթ էր Մ. Լոգինսկու վերամբարձ հոստորականությունը: Ի դեպ, այս առումով Բ. Պաստերնակի թարգմանությունն անհամեմատ ավելի մոտ է Հ. Մասեհյանի թարգմանությանը¹²: Ասվածը հաստատում է մեր եզրակացությունները՝ հիմնված համադրական վերլուծության և վիճակագրական տվյալների վրա:

Ինչ վերաբերում է «Համլետի» դիտարկված չորս թարգմանությունների ընդհանուր գնահատականին, դրանցում պայմանական իմաստի արտահայտման տեսանկյունից, ապա կարելի է հանգել այն եզրակացությանը, որ պայմանի արտահայտման միջոցները դրանցում բազմազան են, թեև դիտվում է գերազանցապես շաղկապների գործածություն: Բացի այդ, պայմանական ցուցիչը միևնույն ասույթի տարբեր թարգմանություններում հաղորդվում է նույնականորեն, ինչպես նաև՝ (և մեծամասամբ) հոմանիշորեն: Առանձին դեպքերում դիտվող ավելի հեռու տարբերությունները կարող են բացատրվել ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ բնույթի պատճառներով: Նմանօրինակ

⁷ А. Н. Горбунов. К истории русск. во «Гамлета». В кн.: У. Шекспир. Гэмлет. Избранные переводы, с. 41.

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 22:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 13:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 23—24:

¹² Տե՛ս է. Վարդաբեյան, Համարժեքության մասեհյանական ըմբռնումը, էջեր 142—167:

են նաև այն եզրակացությունները, որոնց հանգում ենք միջլեզվական թարգմանությունների և բնագրի համադրական վերլուծությունից հետո:

Վերջում համադրական պլանով վերլուծենք պայմանի արտահայտման միջոցները «Լինել, թի չլինել...» մենախոսության մեջ բնագրում, Հ. Մասեհյանի թարգմանության մեջ, ինչպես նաև գոյություն ունեցող բոլոր ուսուցիչների թարգմանություններում: Վերջիններս 17-ն են՝ Ն. Ա. Պոլևոյ, Ա. Ի. Կրոնբերգ, Մ. Լ. Լոզինսկի, Բ. Լ. Պաստերնակ, Մ. Պ. Վրոնչենկո, Մ. Ա. Զագուլյակ, Ն. Խ. Կետչեր, Ն. Ն. Մակլակով, Ա. Լ. Սոկոլովսկի, Ա. Մեկովսկի, Պ. Պ. Գնեդիչ, Պ. Ա. Կանչին, Դ. Վ. Ավերկին, Կ. Ռ. (Կ. Կ. Ռոմանով), Ն. Ն. Ռոսսով, Ա. Դ. Ռադով, Մ. Մ. Մորոզով: Նշենք, որ այս թարգմանությունների մեջ կան նաև արձակ թարգմանություններ:

Այս ծավալով համեմատաբար փոքր մենախոսության մեջ (բնագրում, ինչպես նաև Մ. Լոզինսկու և Բ. Պաստերնակի թարգմանություններում՝ 35 տող) կա երկու պայմանական ասույթ, որոնք տեղավորվում են ընդհանուր առմամբ 13 տողում, այն է՝ գրավում են մենախոսության ընդհանուր ծավալի մեկ երրորդը:

Պայմանական իմաստի ցուցիչներն են when շաղկապը և but that կապը: Հայերեն թարգմանության մեջ դրանք հաղորդվում են համապատասխանաբար այնինչ հակադրական և եթե պայմանական շաղկապներով.

«Թե ոչ, ո՞վ արդյոք կուզեր հանդուրժել
Աշխարհի այնքան նախատինքներին և մտրակներին,
Հարստահարչի անիրավության,
Մեծամիտ մարդու արհամարհանքին,
Քամահրած սիրո տրվայտանքներին,
Օրենքի բոլոր ձգձգումներին,
Պաշտոնյաների աներեսության,
Այն հարվածներին, որ համբերատար արժանավորը
Ստանում է միշտ անարժաններից,
Այնինչ կարող էր մարդ իր հաշիվը իր ձեռքով փակել
Մի մերկ դաշույնով: Ո՞վ կհոժարեր այսքան բեռ կրել,
Հեծծել ու քրտնել տաղտուկ կյանքի տակ,
Եթե երկյուղը մի ինչ-որ բանի մահվանից հետո,
Այն անհայտ երկրի, որի սահմանից
Ոչ մի ուղևոր չի վերադառնում,
Զրձգեր կամքը երկբայության մեջ, և մեկ շրտախալ
Տանել ավելի այն շարիքները, որ այսպես ունինք,
Քան թե սավառնել դեպի նոր ցավեր, որոնց անգետ ենք»:

Իմաստային առումով հայերեն հարաբերակիցը երկրորդ ասույթում նույնական է անգլերեն հարաբերակցին: Ինչ վերաբերում է when /այնինչ շաղկապներին, որոնք իմաստային առումով համարժեք չեն, ապա այստեղ նույնպես հաղիվ թե կարելի է խոսել բնագրի և թարգմանության իմաստային համարժեքության խախտման մասին, քանի որ թարգմանության մեջ արտացոլված է ոչ թե մակերեսային իմաստը, այլ իրացված է խորքային, ստորադասական հղանակի բայով պայմանական ասույթում ներակայորեն դրված ժխտական իմաստը:

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս են արտահայտված անգլերեն շաղկապները ուսուցիչների թարգմանություններում.

- 1) Ն. Պոլևոյի թարգմ. — когда, но
- 2) Ա. Կրոնբերգի թարգմ. — когда бы, только
- 3) Մ. Լոզինսկու թարգմ. — когда б, когда бы

- 4) Բ. Պաստերնակի թարգմ.— когда, когда бы
- 5) Մ. Վրոնչենկոյի թարգմ.— когда, когда бы
- 6) Մ. Զագուլյակի թարգմ.— когда, когда б
- 7) Ն. Կետչերի թարգմ.— когда, если бы
- 8) Ն. Մակլակովի թարգմ.— когда, когда б
- 9) Ա. Սոկոլովսկու թարգմ.— когда бы, когда бы
- 10) Ա. Մեսկոպսկու թարգմ.— когда, лишь
- 11) Պ. Գնեդիչի թարգմ.— когда бы, если б
- 12) Պ. Կանչինի թարգմ.— когда, если бы
- 13) Դ. Ավերկիևի թարգմ.— когда, если б
- 14) Կ. Ռ.-ի թարգմ.— когда бы, когда бы
- 15) Ն. Ռոսսովի թարգմ.— ежель, когда б
- 16) Ա. Ռադլովայի թարգմ.— если, нет
- 17) Մ. Մորզովի թարգմ.— если бы, если бы

Ինչպես կարելի է նկատել, when շաղկապին ուսերեն բոլոր թարգմանություններում համապատասխանում են когда бы (1—14), ինչպես նաև ежель (15) և если бы (16—17) համարժեք շաղկապները: Դրանք տարբերվում են սոսկ ոճական առումով. վերջին երկու թարգմանություններում, ի տարբերություն նախորդների, գործածված են շեղք շաղկապներ: Իսկ անիրական պայմանի ցուցիչը երկրորդ ասույթում գրեթե բոլոր ուսերեն թարգմանություններում միատեսակ է արտացոլված. когда бы և если бы շաղկապներով (տարբերությունը միայն առաջինիս ոճական նշվածությունն է): Բացառություն են կազմում Ն. Պոլևոյի, Ա. Կրոնբերգի, Ա. Մեսկոպսկու և Ա. Ռադլովայի թարգմանությունները, որոնցում արտակալված է ներուկա ժխտական իմաստը համապատասխանաբար но շաղկապով, только, лишь, нет մասնիկներով:

Այսպիսով, «Լինել, թե չլինել...» մենախոսության մեջ բովանդակվող պայմանական ասույթների բնագրի և թարգմանությունների համադրական վերլուծությունը մեկ անգամ էլ հաստատում է վերն արված եզրակացությունների ճիշտ լինելը:

Եվ այսպես, «Համլետից» քաղված պայմանական ասույթների միջլեզվական և ներլեզվական թարգմանությունների հաճադրական վերլուծությունը ցույց տվեց, որ պայմանական իմաստը դրանցում հաղորդվում է բազմազան միջոցներով՝ շաղկապների գերակշռությամբ: Ընդ որում, դիտվում է պայմանական ցուցիչների ինչպես նույնական, այնպես էլ, մեծամասամբ, հոմանիշային արտահայտում:

Անցկացված վերլուծությունը վառ ապացույցն է այն բանի, թե ինչպես են փոփոխակային լեզվական հարաբերակիցներն արտահայտում անփոփոխակային «ներակայում» տրամաբանական շաղկապը:

Л. Г. БРУТЯН— Условные высказывания в переводах.— В статье сопоставительно анализируются условные высказывания в тексте оригинала и межъязыковых переводах, с одной стороны, и внутриязыковых переводах—с другой. Материалом для исследования послужила трагедия Шекспира «Гамлет» и ее перевод на армянский (перевод О. Мадсеяна) и русский (17 переводов). Показывается, что условная семантика в сопоставляемых отрезках текста выражается многообразными способами, преимущественно, с помощью условных союзов. Наблюдается как идентичность, так и, в большей мере, синонимичность выражения условной семантики.